

**«Ամերիաբանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) հաշիվ բացելու,
ավանդի, վճարային քարտի և պահատուփի համար անհրաժեշտ փաստաթղթեր և
տեղեկություններ¹**

1. Տիզիկական անձի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ² (հոգուտ 3-րդ անձի ավանդ ներդնելիս՝ նաև 3-րդ անձի՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ),
- ✓ Հանրային ծառայությունների համարանիշ³ (ՀՀ քաղաքացիների համար),

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար ստորագրությունների նմուշներ:

Մինչև 14 տարեկան անչափահաս անձի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Հաշիվը բացող անձի, անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչների՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Հաշիվը բացող անձի հանրային ծառայությունների համարանիշ³ (ՀՀ քաղաքացիների համար),
- ✓ Անչափահաս անձի օրինական ներկայացուցիչների համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար ստորագրությունների նմուշներ:

14-18 տարեկան անչափահաս անձի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Անչափահաս անձի և վերջինիս օրինական ներկայացուցիչներից որևէ մեկի՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Անչափահաս անձի հանրային ծառայությունների համարանիշ³ (ՀՀ քաղաքացիների համար),

- ✓ Անչափահաս անձի օրինական ներկայացուցիչների համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ,
- ✓ Անչափահաս անձի օրինական ներկայացուցիչներից որևէ մեկի գրավոր համաձայնություն հաշվով գործարքներ կատարելու վերաբերյալ,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար ստորագրությունների նմուշներ:

2. Անհատ ձեռներեցի, ՀՀ օրենսդրության համաձայն ՀՎՀՀ ունեցող ֆիզիկական անձի և Նոտարի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ²,
- ✓ Հանրային ծառայությունների համարանիշ³,
- ✓ Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք
- ✓ Հարկ վճարողի հաշվառման համարը (չի պահանջվում, եթե ներառված է Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքում),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Նոտարի դեպքում՝ նոտարի ծառայողական վկայական և (կամ) նշանակման հրաման,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ՝ ստորագրությունների և կնիքի⁴ (առկայության դեպքում) նմուշներով:

3. Ռեզիդենտ իրավաբանական անձի, օտարերկրյա իրավաբանական անձի՝ ՀՀ տարածքում գրանցված առանձնացված ստորաբաժանման համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Կանոնադրություն, իսկ օտարերկրյա իրավաբանական անձի՝ ՀՀ տարածքում գրանցված առանձնացված ստորաբաժանման դեպքում նաև օտարերկրյա իրավաբանական անձի կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և օտարերկրյա

իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից առանձնացված ստորաբաժանման ղեկավարին տրված լիազորագիր (վերջինս չի պահանջվում, եթե առանձնացված ստորաբաժանման ղեկավարը օտարերկրյա իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարն է),

- ✓ Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, , ներառյալ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի վերաբերյալ տեղեկատվությունը,
- ✓ Հարկ վճարողի հաշվառման համարը (չի պահանջվում, եթե ներառված է Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքում),
- ✓ Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Իրավասու մարմնի (ռեեստրավարի կամ գրանցող այլ մարմնի) կողմից տրամադրված տեղեկություններ 10 և ավել տոկոս ձայնի իրավունք սվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի, մասնակիցների մասին (եթե նման տեղեկություններ առկա չեն հիմնադիր փաստաթղթերում), ներառյալ անձը հաստատող փաստաթղթի տվյալները: Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում սույն կետում նշված տեղեկությունները չեն պահանջվում, եթե ներկայացվում է կարգավորվող բորսայում ցուցակված լինելու մասին տեղեկատվություն,
- ✓ Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի² պատճենը,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ՝ ստորագրությունների և կնիքի⁴ նմուշներով:

Հիմնադրամի, հասարակական կազմակերպության, ասոցիացիայի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Կանոնադրություն,
- ✓ Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, ներառյալ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի վերաբերյալ տեղեկատվությունը,
- ✓ Հարկ վճարողի հաշվառման համարը (չի պահանջվում, եթե ներառված է Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքում),
- ✓ Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Հիմնադրման մասին որոշումը/արձանագրությունը (չի պահանջվում, եթե հիմնադիրների մասին տեղեկությունները ներառված են կանոնադրությունում),
- ✓ Տեղեկություններ (ներառյալ անձը հաստատող փաստաթղթի տվյալները) բարձրագույն

կառավարման մարմնի կազմի մասին (եթե նման տեղեկություններ առկա չեն հիմնադիր փաստաթղթերում), որը կարող է լինել արձանագրության, որոշման կամ հայտարարության տեսքով,

- ✓ Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի² պատճենը,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ՝ ստորագրությունների և կնիքի⁴ նմուշներով:

Պետական (համայնքային) կառավարչական հիմնարկի, ՊՈԱԿ-ի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Կանոնադրություն,
- ✓ Ստեղծման մասին հիմնադրի որոշումը,
- ✓ Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, ներառյալ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի վերաբերյալ տեղեկատվությունը,
- ✓ Կանոնադրությամբ սահմանված դեպքերում հիմնադրի կամ համապատասխան իրավասու մարմնի համաձայնությունը հաշիվ բացելու վերաբերյալ,
- ✓ Հարկ վճարողի հաշվառման համարը (չի պահանջվում, եթե ներառված է Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքում),
- ✓ Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Իրական շահառու(ներ)ի անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի² պատճենը,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարականը (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ (կանոնադրությամբ սահմանված դեպքերում հաստատվում է հիմնադրի կամ համապատասխան իրավասու մարմնի կողմից)՝ ստորագրությունների և կնիքի⁴ նմուշներով:

Մնանկության հատուկ հաշիվ բացելու համար

(ի լրումն իրավաբանական անձի համար պահանջվող փաստաթղթերի⁵)

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Մնանկ ճանաչելու մասին դատարանի որոշում,

- ✓ Մնանկության կառավարիչ նշանակելու մասին դատարանի որոշում,
- ✓ Մնանկության կառավարիչի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր,
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ՝ Մնանկության կառավարիչի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց ստորագրությունների և Մնանկության կառավարիչի կնիքի⁴ (առկայության դեպքում) նմուշներով: Հրահանգը ենթակա է վավերացման պետական իրավասու մարմնի կողմից:

4. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ Կանոնադրություն կամ կանոնադրությանը փոխարինող փաստաթուղթ,
- ✓ Գրանցման վերաբերյալ փաստաթուղթ՝ տրված տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից,
- ✓ Իրավասու մարմնի որոշում(ներ)ը կամ լիազորագիրը (լիազորագրերը) հաշվով գործարքներ կատարելու համար (չի պահանջվում, եթե հաշվով գործարքներ կատարելու է հիմնադիր փաստաթղթերով լիազորված ղեկավար անձը),
- ✓ Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²,
- ✓ Գրանցող գործակալի կողմից թողարկված վկայագիր՝ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի, 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող բաժնետերերի մասին, կամ «ընկերության կարգավիճակի և/կամ ղեկավար անձանց մասին վկայագիր» (Certificate of Incumbency), որը պարունակում է նշված տեղեկատվությունը,
- ✓ 10 և ավել տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տիրապետող անձանց և իրական շահառուների նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (ֆիզիկական անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ², իրավաբանական անձանց՝ կանոնադրություն կամ դրան փոխարինող փաստաթուղթ և գրանցման վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ) պատճենները,

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ՝ ստորագրությունների և կնիքի⁴ (չի

պահանջվում, եթե այն պետության օրենսդրությամբ, որտեղ հիմնադրվել է իրավաբանական անձը, կնիքի առկայությունը պարտադիր չէ. այս դեպքում լրացվում է կնիքի բացակայության մասին հայտարարություն) նմուշներով,

- ✓ իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության ձև:

Հայաստանում օտարերկրյա պետության ղեսպանության և հյուպատոսության համար

Հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ

- ✓ ՀՀ-ում հավատարմագրված լինելու վերաբերյալ փաստաթուղթ,
- ✓ Դեսպանի կամ հյուպատոսի նշանակման վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը (եթե ղեսպանի կամ հյուպատոսի վերաբերյալ տվյալները նշված չեն ՀՀ-ում հավատարմագրված լինելու վերաբերյալ փաստաթղթում),
- ✓ Դեսպանի կամ հյուպատոսի և հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր²

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր

- ✓ Հայտ-պայմանագիր (կամ պայմանագիր),
- ✓ Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության ձև, Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական (առաջին անգամ Բանկ դիմելիս),
- ✓ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգ՝ ստորագրությունների և կնիքի⁴ նմուշներով:

Ծանոթագրություններ

¹ Ընդհանուր դրույթներ

- 1.1 Անհրաժեշտության դեպքում Բանկը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
- 1.2 ԱՄՆ Կոնգրեսի կողմից 2010թ. մարտի 18-ին ընդունված «Օտարերկրյա հաշիվների հարկման համապատասխանության մասին օրենքի» (The Foreign Account Tax Compliance Act, FATCA) դրույթների համաձայն «ԱՄՆ անձ» համարվելու չափանիշներին հաճախորդի տվյալները համընկնելու դեպքում հաճախորդից պահանջվում է լրացնել նաև FATCA-ի համապատասխան ձևերը:
- 1.3 Պետք է ներկայացվեն փաստաթղթերի բնօրինակները (կամ պատճենները, եթե այդպես է սահմանված տվյալ փաստաթղթի պահանջը)՝ առձեռն, կամ փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը (ինչպես բնօրինակ, այնպես էլ պատճեն) պետք է լինեն պատշաճ վավերացված: Ընդ որում՝ պատշաճ վավերացում է համարվում՝
 - 1) ապոստիլով կամ տվյալ պետության իրավասու մարմնի կողմից վավերացումը, իսկ ԱՊՀ երկրների և Վրաստանի դեպքում՝ նոտարական վավերացումը, կամ
 - 2) այլ պետության տարածքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի կողմից վավերացումը:
- 1.4 Օտար լեզվով փաստաթղթերը պետք է ներկայացվեն թարգմանված՝ նոտարական վավերացմամբ: Թարգմանություն չի պահանջվում, եթե փաստաթուղթը ռուսերեն կամ անգլերեն է:
- 1.5 Եթե հաճախորդը նախկինում ներկայացրել է տվյալ փաստաթուղթը, և այն վավեր է, այն կարող է հաճախորդից չպահանջվել:
- 1.6 Եթե Բանկը կարող է ստանալ փաստաթուղթը կամ տեղեկությունը Բանկի համար հավաստի համարվող՝ սահմանափակ մատչելիությամբ կամ հանրամատչելի աղբյուրներից, ապա տվյալ փաստաթուղթը կամ տեղեկությունը կարող է հաճախորդից չպահանջվել:
- 1.7 Եթե հաճախորդը դիմել է հեռահար կապի միջոցով և չի ներկայացրել փաստաթղթերի պատշաճ վավերացված պատճենները, ապա ծառայության մատուցման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները իրականացվում են հաճախորդից ստացված՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի պատճենի և տվյալ ծառայության համար անհրաժեշտ տեղեկատվության կամ հայտի հիման վրա, և ծառայությունը մատուցվում կամ ակտիվացվում է (հաշիվը բացվում է, քարտը տրամադրվում է և այլն) հաճախորդի կողմից փաստաթղթերի բնօրինակները առձեռն ներկայացնելուց կամ պատշաճ վավերացված փաստաթղթերը ուղարկելուց կամ տվյալ դեպքի համար Բանկում այլընտրանքային նույնականացման եղանակ նախատեսված լինելու դեպքում՝ հաճախորդի նույնականացումից հետո:
- 1.8 Հաշվի սպասարկման հետ կապված հավելյալ ծառայություններից (Բնտերենտ-բանկ, Բանկ-հաճախորդ, Հեռախոս բանկ և այլն) օգտվելու համար հաճախորդից պահանջվում է միայն տվյալ ծառայության հայտը (հայտ-պայմանագիրը):

² Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ է համարվում՝

- ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը (այդ թվում՝ կենսաչափական անձնագիրը), նույնականացման քարտը, զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիրը, ծննդյան վկայականը.
- բ) ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը.
- գ) փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.
- դ) օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթերը՝ մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.
- ե) քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը, Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող

փաստաթղթերը՝ մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը:

զ) ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):

³ Հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտում, օտարերկրյա քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետությունում կացության քարտում, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթերում, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքում: Նախկինում տրամադրված սոցիալական ապահովության քարտի համարը նույնպես համարվում է հանրային ծառայությունների համարանիշ: Հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում հաճախորդը պետք է ներկայացնի է ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ:

⁴ Կնիքը համապատասխան ձևի վրա արտատպվում է Բանկի՝ հաճախորդից փաստաթղթերը ընդունող աշխատակցի ներկայությամբ:

⁵ Իրավաբանական անձի անունով սնանկության հատուկ հաշիվ բացելու համար պահանջվում են նաև սույն փաստաթղթի համաձայն իրավաբանական անձի հաշիվ բացելու համար սահմանված փաստաթղթերը (հաճախորդի կողմից ներկայացվող փաստաթղթեր և տեղեկություններ): Ընդ որում, հաշվով գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերը պահանջվում են միայն՝ համաձայն սնանկության կառավարիչի կողմից ներկայացված՝ Հաշվով գործարքներ կատարելու համար հրահանգի, իսկ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջիններիս անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերը կարող են չներկայացվել:

⁶ Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում կայացնելուց հետո հաշվով գործարքներ կատարելու լիազորություն ունի միայն սնանկության կառավարիչը: Մինչև լուծարման մասին որոշում կայացնելը, հաշվով գործարքներ կարող են կատարել սնանկության կառավարիչը և (կամ) վերջինիս գրավոր համաձայնությամբ այլ լիազորված անձինք: